ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1966 թ. մարտի 16-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը։ Ներածական խոսքով ժողովը բացեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ընդգծեց, որ երկրի ժողովրդական տնտեսության զարգացման նոր հնգամյա պլանի վերաբերյալ ՍՄԿՊ XXIII համագումարի դիրեկտիվներում առաջադրված հոյակապ խնդիրների կատարումը մեծապես կախված է հայրենական գիտության ու տեխնիկայի հետ։ Դա սովետական գիտնականներից, այդ թվում նաև մեր հանրապետության մասնագետներից պահանջում է ուժերի լարում և գիտական հետազոտությունների ճիշտ կազմակերպում։

Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ անցած տարում ակադեմիայի գործունեության մի շարք կարևորագույն հարցերի վրա։ Մասնավորապես, նա նշեց գիտնականների բեղմնավոր աշխատանքը մաթեմատիկայի և մեխանիկայի, ֆիզիկայի, օրգանական քիմիայի, բիոքիմիայի, հասարակական գիտությունների և գիտության այլ բնագավառներում։

Ընդհանուր ժողովում «Գիտությունների ակադեմիայի 1965 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Ս. Ս. Մկրտչյանը։

— Անցած 1965 թվականը,— նշեց զեկուցողը,— նշանավորվեց մեր երկրի աշխատավորների նոր, խոշոր հաղթանակներով և հաջողություններով ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Սովետական երկրի միասնական հզոր երթի մեջ նոր բնագծեր նվաճեց հայրենական գիտությունը։ Սովետական գիտության բազմազգ ընտանիքում, կոմունիստական կուսակցության և կառավարության հոգատարության շնորհիվ գիտությունը նոր առաջընթաց ապրեց նաև Սովետական Հայաստանում։

Անցյալ տարի Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկները մշակել են 77 պրոբլեմ, որոնք ընդգրկում են 356 թեմա։ Ակադեմիկոս Ս. Մկրտչյանը հանգամանորեն կանգ առավ ակադեմիայի տարբեր բաժանմունքների, գիտահետազոտական հիմնարկների կոլեկտիվների աշխատանքների բնութագրման վրա։

Ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների դիտական կոլեկտիվների հետազոտությունները նվիրված են եղել ֆունկցիաների ու ֆունկցիոնալ վերլուծության տեսությանը, դիֆերենցիալ ու ինտեգրալ հավասարումներին, առաձգականության մաթեմատիկական տեսությանը, կեղևների ու շերտերի տեսությանը, սողքի գազային դինամիկայի տեսությանը, սինթետիկ նյութերի հատկությունների ուսումնասիրությանը։

Հաշվետու տարում Բյուրականի աստղադիտարանում հետազոտություններ են կատարվել արտագալակտիկ աստղագիտության, անկայուն աստղերի և միգամածությունների ֆիզիկայի, տեսական աստրոֆիզիկայի գծով։ Գիտնականներին հաջողվել է զգալիորեն ընդլայնել և խորացնել հեռավոր աստղասփյուռների մասին եղած տվյալները։ Նրանք գալակտիկաների համար կազմել են պայծառությունների բաշխման մանրամասն քարտեզներ, հայտնաբերել են մինչև այժմ անհայտ մեծ թվով երկնային մարմիններ։

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը 1965 թ. շարունակել է հետազոտել ռադիոաստղագիտության, քվանտային օպտիկայի, ֆիզիկական էլեկտրոնիկայի, տեսական ռադիոֆիզիկայի, լյումինեսցենցիայի և այլ պրոբլեմների ուղղությամբ։

Ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի միացյալ հաշվողական կենտրոնում շարունակվել են աշխատանքներ տեսական և տեխնիկական կիբեռնետիկայի զանազան ուղղություններով։ Հաջող աշխատանքներ են կատարվել էլեկտրոնային թարգմանչի հանգույցների ստեղծման ու կարգավորման, մասնագիտական մաթեմատիկական թարգմանչի ստեղծման ուղղությամբ։

Հաշվետու տարում գիտահետազոտական լուրջ աշխատանքներ է կատարել ակադեմիայի քիմիական գիտությունների բաժանմունքը։ Գիտության այս բնագավառի հիմնարկները անցած տարի հետազոտություններ են կատարել 6 պրոբլեմների գծով, որոնք ընդգրկում են 45 թեմա։

Դրանցից 3 թեմա մտել են ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանի մեջ, իսկ 38-ը՝ մեր հանրապետության։ Քիմիկոսների հետազոտած բազմաթիվ հարցեր մեծ հետաքրքրություն են ներկայացնում արդյունաբերության, գյուղատնտեսության, բժշկության համար։ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի գիտնականները հետազոտել են այնպիսի քիմիական նյութեր ու բույսեր, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել արտաանոթային համակարգության և հոգեկան հիվանդությունների պրոֆիլակտիկայի ու բուժման համար։ Օրգանական քիմիայի ինստիտուտի գիտնականների ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ երեք պրոբլեմները «պոլիմերային նյութերի համար ստաբիլիզատորների և մյուս միացությունների սինթեզը՝ հիմնված ռեակցիաների մեխանիզմների և օրգանական միացությունների ռեակցիոն ունակության և կառուցվածքի միջև կապի վրա», «գյուղատնտեսության քիմիացում» և «տեխնոլոգիական պրոցեսների ուսումնասիրությունները երկֆազ հոսանքումը։ Հետազոտված բազմաթիվ հարցեր ունեն պրակտիկ նշանակություն։

Երկրագիտության բաժանմունքի գիտահետազոտական աշխատանքները հիմնականում տարվել են օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման պայմանները և հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները, հանրապետության ընդերքում նոր գանձերի որոնումներ, հետազոտական աշխատանքների մեթոդների կատարելագործում և այլ ուղղություններով։ Բաժանմունքի ինստիտուտները 1965 թ. մշակում էին 29 թեմա, որոնք ընդգրկված են երկու համամիութենական պրոբլեմների մեջ։ Գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտը ավարտել է հանրապետության տերիտորիայի սեյսմիկ շրջանացումը։

Անդրադառնալով կենսաբանական գիտությունների բնագավառում կատարված գիտահետազոտական աշխատանքներին, ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը նշեց, որ այդ բաժանմունքի ինստիտուտները հաշվետու տարում մշակել են 19 պրոբլեմ՝ ընդգրկում են 66 թեմա, որոնք ունեն կարևոր տեսական և գործնական ժողովրդատնտեսական նշանակություն։ Բուսաբանության և կենդանաբանության ինստիտուտները հանրապետության բուսական և կենդանական աշխարհների առանձին հարցերի ուսումնասիրությունից բացի կատարել են մի շարք այնպիսի տեսական հետազոտություններ, ինչպիսիք են բույսի անհատական զարգացման օրինաչափությունները և օնտոգենեզի պրոցեսների կառավարումը, կենդանիների պատմական ու անհատական զարգացման ուղիներն ու օրինաչափությունները, վերերկրյա օգտակար ֆաունայի արդյունաբերական բարձրացման և ժողովրդական տնտեսության մեջ նրա օգտագործման բարելավման ուղղությամբ միջոցառումների և վնասակար կենդանիների դեմ պայքարի միջոցների մշակումը և այլ պրոբլեմներ։

Հաշվետու տարում լուրջ հաջողություններ են ձեռք բերել նաև ակադեմիայի Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի, միկրոբիոլոգիայի ինստիտուտները, ագրոքիմիայի, բիոֆիզիկայի, նեյրոբիոնիկայի, փորձարարական կենսաբանության, ռադիացիոն գենետիկայի լաբորատորիաները։ Ֆիզիոլոգները աշխատել են այնպիսի պրոբլեմների ուղղությամբ, ինչպես գլխուղեղի զանազան հատվածների աշխատանքի որոշ մեխանիզմների, ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի ազդեցությունը գրգռիչ իմպուլսների առաջացման ու տարածման վրա և այլն։ Միկրոբիոլոգները ուսումնասիրում են մարդու անտեսանելի օգնականներին՝ մանրէներն ու բակտերիաները ժողովրդական տնտեսության մեջ օգտագործելու հետ կապված պրոբլեմները։ Ագրոքիմիայի լաբորատորիայի ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են բույսերի անհող աճեցման հարցերին։

Վերլուծելով հասարակական գիտությունների բնագավառում կատարված աշխատանքները, զեկուցողը նշեց, որ այդ բաժանմունքի ինստիտուտները հաշվետու ժամանակաշրջանում շարունակում էին մշակել 33 պրոբլեմներ՝ տնտեսագիտության, պատմության, գրականության, լեզվի, հնագիտության, փիլիսոփայության, իրավունքի, ազգագրության, արևելագիտության կարևորագույն հարցերի վերաբերյալ։

— Մեր հաջողությունները,— ասաց ակադեմիկոս Ս. Մկրտչյանը,— էլ ավելի զգալի կլինեին, եթե չլինեին մի շարք էական թերություններ, ինչպես օրինակ գոյություն ունեցող բազմաթեմայնությունը, գիտական նոր ուղղությունների գծով կադրերի պատրաստման անբավարար դրվածքը, հետազոտությունների ժամանակակից եղանակների ոչ լիիրավ արմատավորումը և այլն։

Հաշվետու զեկուցման շուրջը ելույթներ ունեցան ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ս. Ղարիբյանը, Ի. Վ. Եղիազարովը, Ա. Ա. Առաքելյանը, Ա. Ի. Ալիխանյանը, Վ. Հ. Գուլքանյանը, Մ. Գ. Մանվելյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Վ. Ի. Իսագուլյանը, Հ. Խ. Բունյաթյանը, ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը, պրոֆեսոր Խ. Պ. Միրիմանյանը։

Եզրափակման խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Հաշվետու ժողովի մասնակիցները միաձայն հաստատեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի 1965 թվականի գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանյանը՝ «Բարձր էներգիայի մասնիկների ֆիզիկայի ժամանակակից պրոբլեմները», ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանը՝ «Մ. Նալբանդյանը և ռուս հեղափոխական դեմոկրատների գաղափարական ընդհանրությունները և քաղաքական կապերը», ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Հ. Տ. Ադոնցը՝ «Էներդոսիստեմների մաթեմատիկական մոդելացումը նրա ռեժիմների օպտիմիզացման համար» թեմաներով։

Ընդհանուր ժողովը քննեց նաև կազմակերպչական հարցեր։ ՀՍՍՌ ԳԱ նախագահության մի քանի անդամների ընտրության ժամկետի լրացման կապակցությամբ տեղի ունեցան նոր ընտրություններ։ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար և ՀՍՍՌ ԳԱ նախագահության անդամ ընտրվեց ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը, ՀՍՍՌ ԳԱ նախագահության անդամ և ակադեմիայի կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Վ. Հ. Գուլքանյանը, ՀՍՍՌ ԳԱ նախագահության անդամ ընտրվեցին ակադեմիկոսներ Ա. Ղ. Իոսիֆյանը, Ա. Ղ. Նազարովը, Գ. Ս. Դավթյանը։

Ակադեմիայի ընդհանուր ժողովին մասնակցեցին ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, ՀՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿՊ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը, ՀԿՊ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺՈՂՈՎԸ

1966 թ. մարտի 14-ին տեղի ունեցավ ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի հաշվետու ժողովը։ Բաժանմունքի հիմնարկների 1965 թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ս. Տ. Երեմյանը։

Վերլուծելով հասարակական գիտության բնագավառում կատարված աշխատանքները, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը նշեց, որ բաժանմունքի ինստիտուտների գծով 1965 թ. համար նախանավորված 133 թեմա-առաջադրանքներից ավարտվել են 78-ը, իսկ մնացածների գծով որպես փոխանցվող թեմաներ հետազոտական աշխատանքներ են կատարվելու ընթացիկ տարում։

Տնտեսագիտության ինստիտուտի գիտնականները «Հայկական ՍՍՌ արտադրական ուժերի տեղաբաշխման գիտական սխեման (մինչև 1970 թ.)» պրոբլեմի գծով որոշել են հանրապետության հանքային ռեսուրսների տեխնիկա-տնտեսական բնութագրումները, ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերը, սկսել են արտադրողական ուժերի տեղաբաշխման գիտական սխեմայի մշակման աշխատանքները։ Կազմված է շրջանային խմբավորման ատլաս, որը պարունակում է վարչական շրջանների քարտեզներ և այդ շրջանների տնտեսական բնորոշումը։ «1966—1970 թթ. համար ՀՍՍՌ տնտեսության մեջ բնակչության զբաղվածության բարձրացման հիմնական ուղղությունները» թեմայի գծով քննարկվում են արդյունաբերությունում, տրանսպորտում, շինարարությունում, գյուղատնտեսությունում և սպասարկման ոլորտում բնակչության զբաղվածության բարձրացման հիմնական ուղղությունները։ «Հայկական ՍՍՌ արդյունաբերության հիմնական ճյուղերի կապիտալ ներդրումների տնտեսական էֆեկտիվության բարձրացման ուղիները» թեմայով, փաստական նյութի հիման վրա, մշակված ու վերլուծված են լազմաթիվ հարցեր։

Խոսելով պատմության ինստիտուտի անցած տարվա գործունեության մասին, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը նշեց, որ պատմաբան գիտնականների ուժերը կենտրոնացվել են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմության, կապիտալիստական հասարակարգի գենեզիսի և պատմության, ստրկատիրական հասարակության պատմության, ֆեոդալական հասարակարգի գենեզիսի և պատմության, հայ պարբերական մամուլի պատմության պրոբլեմների ուսումնասիրման և «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի ստեղծման վրա։

1965 թ. պատմության ինստիտուտը հրատարակել է Ա. Համբարյանի «Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914)», Գ. Սարգսյանի «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը», Պ. Կոկինոսի «Հունահայ գաղութի պատմությունից», Ռ. Հովհաննիսյանի «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը», Խ. Բարսեղյանի «Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը» և այլ աշխատություններ։

Հաշվետու տարում Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը գիտա-հետազոտական աշխատանքներ է տարել հիմնականում 6 պրոբլեմների գծով՝ մարքս-լենինյան գրականություն, պոետիկա, հայ նոր գրականություն, հայ հին գրականություն, հայ կլասիկ գրողների երկերի հրատարակություն, գրական կապեր, սովետահայ գրականության զարգացման օրինաչափությունները արդի ժամանակաշրջանում։

Գիտա-հետազոտական լուրջ աշխատանքներ են կատարել հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտնականները, որոնց ուշադրությունը հաշվետու տարում հիմնականում ուղղված է եղել Հայաստանի հնագիտական, ազգագրական և հայկական ֆոլկլորի ուսումնասիրության վրա։ 1965 թ. ավարտվել են հետևյալ թեմաները՝ «Հայաստանի էնեոլիթիկ հուշարձանները», «Մրոնզի և վաղ երկաթի հուշարձանները», «Հայաստանի կիկլոպյան բերդերը», «Անտիկ շրջանի հուշարձանները», «Միջնադարյան Հայաստանի քաղաքները»։

Ինստիտուտի աշխատանքներում զգալի տեղ են գրավում արշավային-դաշտային աշխատանքները։ Պեղումներ են կատարվել Շենգավիթի, Լճաշենի, Սևանի, Կարմիր բլուրի, Արինբերդի, Նոր Արմավիրի, Գառնիի, Հացավանի, Դվինի և այլ վայրերի հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանների, որոնց ընթացքում հայտնաբերվել են հետաքրքիր հնագիտական նյութեր։

Հաշվետու տարում բաժանմունքի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտնականները դիտահետազոտական աշխատանքներ են տարել «Հայոց լեզվի զարգացման օրինաչափությունները կապված սոցիալիստական հայ ազգի զարգացման հետ», «Բառարանագրություն և բառագիտություն», «Հայոց լեզվի պատմության հարցեր», «Հայ բարբառների ուսումնասիրության հարցեր» պրոբլեմների շուրջը։

Անդրադառնալով բաժանմունքի փիլիսոփայության և իրավունքի, արևելագիտության սեկտորների աշխատանքների վերլուծմանը, ակադեմիկոս Ս. Երեմյանը նշեց, որ այդ սեկտորները հաշվետու տարում լուրջ հետազոտություններ են կատարել փիլիսոփայության, իրավունքի և արևելագիտության բազմաթիվ հարցերի շուրջը։

Փիլիսոփայության և իրավունքի սեկտորը հաշվետու տարում մշակում էր մի շարք թեմաներ հետևյալ պրոբլեմների գծով՝ սոցիալիզմի զարգացման և կոմունիզմի անցման օրինաչափությունները, դիալեկտիկական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայության հարցեր, բուրժուական դաղափարախոսության քննադատությունը, հայ փիլիսոփայության պատմության հարցերը, էսթետիկայի պրոբլեմները, պատմության և իրավունքի հարցերը։ Ավարտվել են «Կոմունիստական ֆորմացիայի լինելիության դիալեկտիկան», «Պատմության մարքսիստական փիլիսոփայության բուրժուական քննադատության սնանկությունը», «Ժամանակակից պատմական գիտության մի քանի մեթոդոլոգիական սկզբունքների քննադատական ակնարկ» թեմաները, «Գիտական տեսության կառուցման և հիմնավորման իմացաբանական հարցերը» կոլեկտիվ աշխատությունը և այլ թեմաներ։

Արևելագիտության սեկտորի գիտնականները մշակել են ազգային-ազատագրական և բանվորական շարժումները Մերձավոր և Միջին արևելքում, Մերձավոր և Միջին արևելքի երկրների ներքին և արտաքին քաղաքականությունը, կուլտուրայի պատմությունը, բրդագիտության հարցերը և այլ թեմաներ։

1965 թ. սեկտորը հրատարակել է Հ. Նալբանդյանի «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Հ. Ջնդիի «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» և այլ աշխատություններ։

Հաշվետու զեկուցման շուրջը ելույթներ ունեցան ՀՍՍՌ ԳԱ փոխ-պրեզիդենտ Մ. Գ. Ներսիսյանը, պատմության ինստիտուտի դիրեկտոր Գ. Գալոյանը, հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր Բ. Առաքելյանը, լեզվի ինստիտուտի դիրեկտոր Գ. Ջահուկյանը, արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Ինճիկյանը, փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ Հ. Ասլանյանը, պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Ա. Սիմոնյանը և տնտեսագիտության ինստիտուտի գիտական-քարտուղար Վ. Խոջաբեկյանը։

Ժողովի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ղանալանյանի «Միքայել Նալբանդյանը և ժողովրդական բանահյուսությունը» զեկուցումը։

Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովին մասնակցում էին ՀԿՊ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը և ՀԿՊ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը։